ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ)
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 18-ը հոկտեմբերի 2018թ.
Ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալի ՊԺԿ, Ա. Մուրադյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲ բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Շլեպչյան,
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲ բաժնի գլխավոր մասնագետ, Վ. Մելքոնյան,
ՀՀ ՊՆ աշխատակազմի քարտուղարության հսկողության բաժնի գլխավոր մասնագետ Խ. Սմբատյան,
Հանձնաժողովի քարտուղար՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյանը:

Հանձնաժողովն արձանագրեց հայտերի ներկայացման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո:

25.10.2018թ., ժամը 10:30-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«Կահույքի վերանորոգման և պահպանման» ծառայությունների** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1.	«ԴԱՌԵՍ» ՍՊԸ
2.	«Սեմանգ» ՍՊԸ
3.	«ՌԱՋ ՇԻՆ» ՍՊԸ
4.	«Հայր և Որդի Գյոդակյաններ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Մաղաքյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են.

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «ՌԱՋ ՇԻՆ» և «Հայր և Որդի Գյոդակյաններ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված գնային առաջարկների. մասնավորապես՝

- 2-րդ չափաբաժնի մասով «ՌԱՋ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի հրավերի N 4 հավելվածով նախատեսված գնային առաջարկի ընդհանուր գինը չի համապատասխանում N 4.1 հավելվածի ընդամենը ստացվող թվին,
- 2-րդ չափաբաժնի մասով «Հայր եվ Որդի Գյոդակյաններ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ ընթացակարգի հրավերի N 4 հավելվածով նախատեսված գնային առաջարկը (դրա լրացման կարգը) չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին. գնային առաջարկի «Արժեքը» և «ԱԱՀ» դաշտերում լրացված թվերի հանրագումարը չի համապատասխանում «Ընդհանուր գինը» դաշտում տառերով լրացված թվին:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ՌԱՋ ՇԻՆ» և «Հայր եվ Որդի Գյոդակյաններ» ՍՊԸ-ների հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Մաղաքյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Մ	Ծառայության անվանումը	Պլանավորած նախահաշվային միավորի գին ՀՀ դրամ	«ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ի առաջարկած գին /դրամ/		«Սեմանգ» ՍՊԸ-ի առաջարկած գին /դրամ/	
			առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1.	Կահույքի վերանորոգման և պահպանման ծառայություններ (Գրասենյակային գույք և կահույք)	442,781	146,345	146,345	279,325	335,190
2.	Կահույքի վերանորոգման և պահպանման ծառայություններ (Զինվորական և հոսպիտալային մահճակալներ)	7,304	5,550	5,550	0	0

Ներկայացված են առանձին տեսակի ծառայությունների համար առաջարկվող միավորի գների հանրագումարի արդյունքում մասնակիցների առաջարկած գները: «ՌԱՋ ՇԻՆ» և «Հայր և Որդի Գյոդակյաններ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված գնային առաջարկները աղյուսակում չեն ներառվել, քանի որ դրանք չէին համապատասխանում ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին:

3.2 «Դառես» և «Սեմանգ» ՍՊԸ-ների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/: Ըստ ներկայացված տվյալների՝ «Դառես» ՍՊԸ-ն ԱԱՀ չի վճարում:

3.3 Քանի որ «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/1» ծածկագրով ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և ընթացակարգի հրավերի 7.6 կետի 1-ին ենթակետի պահանջները, որոշեց գների նվազեցման նպատակով 29.10.2018թ. ժամը 12:15-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ և նիստը կասեցնել մինչև բանակցությունների օրը:

29.10.2018թ., ժամը 12:15-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին բանակցություններին որևէ մասնակից չներկայացավ և առաջարկված գները թողնվեցին առանց փոփոխության:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Մաղաքյան)

4.1 **31.10.2018թ** (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Դառես» ՍՊԸ-ն: «Սեմանգ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով ճանաչվեց 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից:

4.2 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Մաղաքյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/1 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Շլեպչյան
Գնահատող	Վ. Մելքոնյան
Գնահատող	Խ. Սմբատյան
Հանձնաժողովի քարտուղար	Ա. Մաղաքյան